ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 79-Ա

Արթիկ համայնք 12 նոյեմբերի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 13 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի թիվ 54-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2021 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
2. Արթիկ համայնքի բնակիչ Նարինե Լյովայի Հովսեփյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-ն որոշման համաձայն բնակարանային պայմանների բարելավման նպատակով շահառուների ցուցակում հաշվառելու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի վարչական սահմաններում գտնվող «Տուֆաբլոկների գործարան» բաց բաժնետիրական ընկերությանը մասնավորեցված ձեռնարկության շենքերի ու շինությունների պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
4. Հայաստանի Հանրապետությունին Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից Բաղրամյան փողոց 3-րդ նրբանցք 16 հասցեում գտնվող, 0,04683հա մակերեսով հողամասը վարձակալական հիմունքներով հրանտ ֆերիկի արաջյանին վարձակալությամբ տրամադրելու մասին /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝

Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0
Կողմ՝ 8

Հակոբյան Հարություն

Մկրտչյան Մուշեղ

Նիկողոսյան Արմեն

Վարագյան Մեսրոպ

Հակոբյան Տարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Զոփիկյան Արտակ

Աբրահամյան Ալեքսան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
12 նոյեմբերի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 80-Ա

Արթիկ համայնք 12 նոյեմբերի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ) ԲԱԺՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 67-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2021 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ բաժնի /այլ դասերին չպատկանող/ բաժնում նախատեսված գումարից կատարել հատկացում Արթիկ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին՝ 230000 (երկու հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝
Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0
Կողմ՝ 8

Հակոբյան Հարություն

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Տարոն

Չոփիկյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ղուլիջողյան Ռաֆիկ

Աբրահամյան Ալեքսան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
12նոյեմբերի 2021թվական

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի
նոյեմբերի 12-ի թիվ 80-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

h/h	Ազգանուն,Անուն,Հայրանուն	Գումարը /դրամ/
1.	Գևորգյան Տիգրանուհի Հենրիկի	10000
2.	Պողոսյան Նաիրա Արայիկի	10000
3.	Մանանդյան Լյուդմիլա Աշոտի	10000
4.	Հովհաննիսյան Դոնարա Պերճի	10000
5.	Դարբինյան Վարդան Սերյոժայի	10000
6.	Նազարեթյան Արթուր Գրիշայի	10000
7.	Խաչատրյան Դոնարա Լևոնի	10000
8.	Մովսիսյան Տաթևիկ Ժորայի	10000
9.	Գրիգորյան Լուսինե Արտավազդի	10000
10.	Ղազարյան Սուսան Լյուդվիգի	40000
11.	Մելքոնյան Արմենուհի Գրիշայի	50000
12.	Գրիգորյան Սուսաննա Սարգսի	50000
	Ընդամենը	**230000**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
12 նոյեմբերի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 81-Ա

Արթիկ համայնք 12 նոյեմբերի 2021 թվական

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՆԱՐԻՆԵ ԼՅՈՎԱՅԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 1419-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արթիկ համայնքի բնակիչ Նարինե Լյովայի Հովսեփյանը դիմել է Արթիկ համայնքի ղեկավարին, խնդրելով սահմանված կարգով իրեն ընդգրկել բնակարանային պայմանների բարելավման նպատակով շահառուների ցուցակում:

Նարինե Լյովայի Հովսեփյանի որդին՝ Կարեն Համլետի Հովսեփյանը զոհվել է 2020թվականի հոկտեմբերին 02-ին, 2020թվականի սեպտեմբերի 27-ից սկսված, 44-օրյա Արցախյան պատերազմում: Նարինե Լյովայի Հովսեփյանի չի աշխատում, չունի իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակարան:

Հիմք ընդունելով վերը շարադրված փաստական հանգամանքները, գտնում ենք, որ քաղաքացի Կարեն Համլետի Հովսեփյանի մայր Նարինե Լյովայի Հովսեփյանին պետք է վերցնել հաշվառման Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 06-ի թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված բնակարանային պայմանների բարելավման նպատակով շահառուների ցուցակում:

Հաշվի առնելով վերոգրյալը, և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշման դրույթներով Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

2020թվականի սեպտեմբերի 27-ից սկսված, 44-օրյա Արցախյան պատերազմում զոհված Կարեն Համլետի Հովսեփյանի մայր Նարինե Լյովայի Հովսեփյանին ճանաչել անօթևան և վերցնել հաշվառման Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 06-ի թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված բնակարանային պայմանների բարելավման նպատակով շահառուների ցուցակում:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝

Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 8

Հակոբյան Հարություն

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Տարոն

Զոփիկյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ղուլիջողյան Ռաֆիկ

Աբրահամյան Ալեքսան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
12 նոյեմբերի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 82-Ա

Արթիկ համայնք 12 նոյեմբերի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՏՈՒՖԱԲԼՈԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 600-Ն որոշմամբ հաստատված «արտադրական նպատակային նշանակության շենքերի, շինությունների դասակարգման ցանկի» 2-րդ կետը, Հայատանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության սեփականաշնորհման «11» հուլիսի 1997 թվականի N 648-2 պայմանագիրը /հետագայում՝ պայմանագիր/, համաձայն որի «Տուֆաբլոկների գործարան» բաց բաժնետիրական ընկերությանն է վաճառվել Մարզ Շիրակ, Արթիկ համայնք, Տոֆագործների փողոց 1/5 հասցեում գտնվող «Տուֆաբլոկների գործարան» ԴՁ-ին պատկանած գույքը, որոնց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողատարածքի նկատմամբ ընկերությունը ունեցել է օգտագործման իրավունք, համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասի փաստացի հատակագծի կազմաում է 19.49844 հեկտար, հաշվի առնելով «Տուֆաբլոկների գործարան» բաց բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2021 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 2935 դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, վերականգնել Հայատանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության սեփականաշնորհման «11» հուլիսի 1997 թվականի N 648-2 պայմանագիրի համաձայն «Տուֆաբլոկների գործարան» բաց բաժնետիրական ընկերությանը /հետագայում՝ ընկերություն/ վաճառված «Տուֆաբլոկների գործարան» ԴՁ-ին պատկանած շենքերի և շինությունների պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-002-0005- կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 19.49844 հեկտար հողամասի նկատմամբ /հիմք՝ համապատասխան որոկավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի փաստացի հատակագիծ/ ընկերության հողհատկացման հիմքերը /հասցեն՝ մարզ Շիրակ, Արթիկ համայնք, Տուֆագործների փողոց 1/5 և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասի հիմքով այդ հողամասի նկատմամբ ճանաչել «Տուֆաբլոկների գործարան» բաց բաժնետիրական ընկերության սեփականության իրավունքը /Ձեռնարկության պետական գրանցման վկայական համար 034654, գրանցման համար 15.130.00211, գործադիր տնօրեն՝ Արթուր Ալբերտի Սահակյան, անձնագիր՝ ԱԿ 0659949, տրված՝ 2010-11-17, 028-ի կողմից/:

2. Նշել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, հողամասի նկատմամբ ընկերության սեփականության ճանաչումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյանին.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

4. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն ակտի ընդունման մասին «Տուֆաբլոկների գործարան» բաց բաժնետիրական ընկերության տնօրինությանը առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝

Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 8

Հակոբյան Հարություն

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Տարոն

Չոփիկյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ղուլիջողյան Ռաֆիկ

Աբրահամյան Ալեքսան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
12 նոյեմբերի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 83-Ա

Արթիկ համայնք 12 նոյեմբերի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԵՐԻՑ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 0,04683ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀՐԱՆՏ ՖԵՐԻԿԻ ԱՐԱՋՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հրանտ Ֆերիկի Արաջյանի 2021թվականի նոյեմբերի 12-ի թիվ 2962 դիմումի

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից Բաղրամյան 3-րդ նրբանցք 16 հասցեում գտնվող, 08-002-0040-0048 կադաստրային ծածկագրով, 0,04683հա մակերեսով հողամասը վարձակալությամբ հատկացնել Հրանտ Ֆերիկի Արաաջյանին:

2. Սահմանել վարձակալական վճար տարեկան 1,0 հա–ի համար 31680 (երեսունմեկ հազար վեց հարյուր ութանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝
Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0
Կողմ՝ 8

Հակոբյան Հարություն

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Տարոն

Չոփիկյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Աբրահամյան Ալեքսան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
12 նոյեմբերի 2021թվական